Ջրհեղեղ՝ Չինաստանում

Դպրոցների անվտանգության գնահատման ծրագիրը

Ստեղծվել է ԱԻՆ Երեւանի վետերանների խորհուրդը



Ռոբոտներն ու ձեր անձնական կյանքը

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ով իրազեկված է, նա պաշտպանված է

արտակարգ թերթ

N 18(529) 20.06.2014 - 26.06.2014 www.mes.am

Լրագրողներին ներկայացվեցին ռադիոլոկացիոն կայանի առանձնահատկությունները

Հունիսի 19-ին ՀՀ ԱԻ նախարարությունը լրագրողների համար շրջայց էր կազմակերպել Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքի տարածքում գտնվող հակակարկտային ռադիոլոկացիոն կենտրոն՝ տեղում ծանոթացնելու դրա աշխատանքի սկզբունքներին:



ԱԻՆ «Մթնոլորտային երեւույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Կարապետյանը լրագրողներին ներկայացրեց ռադիոլոկացիոն կայանի աշխատանքի առանձնահատկությունները եւ հակակարկտային կայանների կառավարման միասնական համակարգի առավելությունները:

«ՄԵՎԱՆՇ» ՊՈԱԿ-ի կազմում գործում է երկու ՄՐԼ-5 ռադիոլոկացիոն կայան, որոնցից մեկը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի տարածքում, մյուսը՝ Արագածոտնի մարզում, որտեղից եւ իրականացվում են ռադիոլոկացիոն դիտարկումները: Դրանցից ստացված տվյալների հիման վրա կայացվում է հակակարկտային կայանների գործարկման որոշում:

ՄՐԼ-5 մետեոռադարը օգտագործվում է եղանակի վտանգավոր երեւույթների (ամպամածություն, տեղումներ, ամպրոպ, կարկուտ, փոթորկանք) մասին ռադիոտեղորոշման օպերատիվ տեղեկություններ ստանալու եւ մշակելու համար՝ իրական ժամանակում փոխանցելով տվյալները հեռավոր օգտագործողներին՝ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման, ինչպես նաեւ մարզային հակակարկտային կենտրոններին: Ռադարն ավտոմատ օդերեւութաբանական ռադիոտեղորոշման հաշվողական համալիր է: ՄՐԼ-5-ը տարբերվում է օդերեւութաբանական տեղեկատվության ներկայացման եւ մշակման նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, որը թույլ է տալիս ամպամածության հետ կապված եղանակի վտանգավոր երեւույթների մասին տեղեկատվությունը ստանալ ժամանակի իրական չափացույցով:



«ԱՍՈՒ-ՄՐԼ» համալիրն ապահովում է ամպերի բազմակողմանի ուսումնասիրությունը մինչեւ 300 կմ հեռավորության վրա՝ ցույց տալով ամպի կոորդինատները, չափը, շարժման ուղղությունն ու արագությունը:

Մետեոռադարի տվյալները վերլուծվում են եւ համակարգում գրանցում ամպի բազմաթիվ հարաչափեր՝ ջերմաստիճան, ջրայնություն, սառցապարունակություն եւ այլն: Կարեւոր է, որ գրանցվում են այդ հարաչափերի փոփոխությունները թնդանոթների գործարկման ընթացքում, այսինքն՝ ցույց է տրվում, թե ինչ փոփոխություններ են տեղի ունենում ակտիվ ներգործության արդյունքում: Ուսումնասիրված ամպերի տվյալները եւ դրանց փոփոխությունները արխիվացվում են:

Արագածոտնի ռադիոլոկացիոն կայանի պետ Սամվել Աղայանը նշեց, որ այս կայանի օգնությամբ դիտարկումներ են իրականացվում ՀՀ գրեթե բոլոր մարզերում (բացի Սյունիքը): Նա նաեւ համակարգում արխիվացված տեսանյութի միջոցով ցուցադրեց անցած ամսվա ընթացքում հանրապետության մշակովի հողատարածքներին սպառնացող կարկտային պրոցեսները եւ հակակարկտային կայանների ազդեցության հետեւանքով դրանց չեզոքացումը:

Նոր կոչում եւ նշանակումներ՝ ԱԻՆ-ում

Հունիսի 18-ին ՀՀ ԱԻ նախարար Արմեն Երիցյանի հրամանով կատարվել է 10 նոր նշանակում՝ ՓՈՒՎ կարեւորագույն օբյեկտների պահպանության բաժնում, Երեւանի փրկարարական վարչության Արաբկիրի եւ Աջափնյակի բաժինների, ինչպես նաեւ Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի եւ Վայոց ձորի հրշեջ-փրկարարական ջոկատներում:

ԱԻ նախարար Ա. Երիցյանի մեկ այլ հրամանով՝ ՓԾ կադրերի վարչության կազմակերպչական բաժնի ավագ հրահանգիչ Աննա Ալեքսանյանին շնորհվել է փրկարար ծառայության մայորի կոչում:

ԱԻՆ-ում եւ աշխատում են, եւ հաղթում

Հունիսի 16-ին ՀՀ ԱԻ նախարարությունում տեղի է ունեցել հերթական ամենշաբաթյա խորհրդակցություն, որը վարել է ԱԻ նախարար Ա. Երիցյանը:

Փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գեներալ-մայոր Ս. Ազարյանը զեկուցեց շաբաթվա ընթացքում գրանցված պատահարների եւ կատարված հանձնարարականների մասին:

Խորհրդակցության մասնակիցները նախարարին զեկուցեցին Գառնիի դիտակայան շրջայցի եւ Բալահովիտում տեղակայված հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի աշխատանքների մասին:

Ամենշաբաթյա խորհրդակցությանն առցանց մասնակցող ԼՂՀ փրկարար ծառայությունը եւ մարզային փրկարարական վարչությունները զեկուցեցին շաբաթվա ընթացքում գրանցված պատահարների, ընթացիկ աշխատանքների, մարզային ՃԿԿ-ների ստեղծման մասին:

ԱԻ նախարարին զեկուցվեց Հայաստանի ազգային պարաօլիմպիական կոմիտեի կազմակերպած՝ հաշմանդամների հանրապետական մարզական 12-րդ փառատոնում ԱԻ նախարարության աշխատակիցների ձեռքբերման մասին: Աշխատակիցներն իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել եւ պատվավոր պարգեւների արժանացել:

Հաղթանակներ ու մրցանակներ

Հունիսի 10-12-ը Հայաստանի ազգային պարաօլիմպիական կոմիտեն կազմակերպել էր հաշմանդամների հանրապետական մարզական 12-րդ փառատոնը: Մրցումներն անցկացվել են Հայկական կարմիր խաչի ընկերության միջազգային վերականգնողական կենտրոնում:

Մարզական փառատոնին մասնակցում էր ՀՀ տարբեր մարզերից ու մայրաքաղաքից ժամանած, հաշմանդամություն ունեցող 110 մարզիկ, որոնց թվում են նաեւ ՀՀ ԱԻ նախարարության ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկատվության վարչության 6 աշխատակից:

Փառատոնում ընդգրկված էին բասկետբոլ, բազկամարտ, լող, սեղանի թենիս, ծանրամարտ եւ շախմատ մարզաձեւերը:

Մարզական փառատոնին մասնակցող ԱԻՆ աշխատակիցները հանդես էին գալիս մայրաքաղաքն ու տարբեր մարզեր ներկայացնող թիմերում եւ գրավել են հետեւյալ մրցանակային տեղերը.

- **Սեւակ Մխիթարյան** (տեղեկատվության վարչության պետ), մասնակցել է նստասայլակներով բասկետբոլ մարզաձեւին եւ գրավել 2-րդ տեղը, իսկ ծանրամարտից՝ 3-րդ տեղը:
- **Հրաչյա Մանուկյան** (տեղեկատվության վերլուծության բաժնի առաջատար մասնագետ), նստասայլակներով բասկետբոլ մարզաձեւում գրավել է 1-ին տեղը:
- **Նուբար Կիրակոսյան** (տեղեկատվության ստացման եւ հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետ), հաղթել է սեղանի թենիս մարզաձեւում՝ գրավելով 1-ին տեղը, իսկ բազկամարտում՝ 2-րդ տեղը:
- **Ալիկ Բաբայան** (տեղեկատվության ստացման եւ հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետ), սեղանի թենիս մարզաձեւում զբաղեցրել է 3-րդ տեղը:

ՀՀ ԱԻ նախարար Ա. Երիցյանի հանձնարարությամբ՝ մարզական փառատոնին մասնակցած աշխատակիցները ներկայացվել են խրախուսման:

քրոնիկոն

ԱԻՆ
միացյալ հեռախոսահամարն է
911

ՃՏՊ՝ Մարգարյան-Ֆուչիկ փողոցների խաչմերուկում

Հունիսի 14-ին, ժամը 02.55-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Մարգարյան-Ֆուչիկ փողոցների խաչմերուկում տեղի է ունեցել ՃՏՊ, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ, ՃԿԿ օպերատիվ եւ հատուկ փրկա-

րարական ջոկատի հերթապահ խմբերը:

Պարզվել է, որ բախվել են «ԲՄՎ» մակնիշի 34 MA 394 եւ «Լեքսուս» մակնիշի 99 PR 606 պետհամարանիշերով ավտոմեքենաները, ինչի հետեւանքով «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենան շրջվել է. առկա է գազի արտահոսք:

Հրշեջ-փրկարարները ավտոմեքենաներից դուրս են բերել 1991 թ. ծնված Ս. Մ.-ին, 1992 թ. ծնված Տ. Զ.-ին եւ 1992 թ. ծնված Գ. Խ.-ին, ովքեր տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով հոսպիտալացվել են «Արմենիա» ԲԿ: Բժիշկները տուժածների առողջական վիճակը գնահատել են ծանր: Փրկարարները «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայից դուրս են բերել անձը չպարզված տղամարդու (20-25 տարեկան) դի:

Հրշեջ-փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները, դադարեցրել գազի արտահոսքը եւ կատարել ճանապարհահատվածի լվացման աշխատանքներ:

ՃՏՊ՝ Չարենցավան-Ֆանտան ավտոճանապարհին

Հունիսի 13-ին, ժամը 20.00-ին ահազանգ է ստացվել, որ Չարենցավան-Երեւան ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ, կա տուժած. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ Մ-4 միջպետական ավտոճանապարհի Չարենցավան-Ֆանտան հատվածի 1-ին կմ-ին «ՎԱԶ-2106» մակնիշի 31 SL 719 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ 4 մ գլորվել է ձորակը:

Մինչ հրշեջ-փրկարարների դեպքի վայր հասնելը՝ 1974 թ. ծնված Ռ. Դ.-ն տեղի ուժերով տեղափոխվել է Աբովյան քաղաքի ԲԿ: Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են բավարար:

Հրշեջ-փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան եւ դադարեցրել գազի արտահոսքը:

ՃՏՊ՝ Երեւան-Սիսիան ավտոճանապարհին

Հունիսի 14-ին, ժամը 10.30-ին տեղեկատվություն է ստացվել, որ Սյունիքի մարզի Զանգերից դեպի Սիսիան 1-ին կմ-ի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ, կան տուժածներ, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ դեռեւս չբացահայտված հանգամանքներում «Մ-2» միջպետական ավտոճանապարհի Սիսիան-Երեւան հատվածի 38-րդ կմ-ի մոտակայքում՝ ոլորաններում, «Տոյոտա Պրադո» մանկիշի UN 051 AM պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ավտոճանապարհի երթեւեկելի հատվածից եւ մոտ 50 մ գլորվել՝ հայտնվելով ներքեւի ճանապարհահատվածում, ինչից ավտոմեքենայի վարորդ Ռ. Ա.-ն տեղում զոհվել է, իսկ ուղեւորներ՝ Գ. Ղ.-ն (ծնվ. 1959 թ.), Ա. Ա.-ն (ծնվ. 1968 թ.) եւ Մ. Հ.-ն (ծնվ. 1977 թ.) տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Աղիտու գյուղի հոսպիտալ: Բժիշկները Գ.Ղ.-ի, Ա.Ա.-ի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության, իսկ Մ. Հ.-ն ստանալով համապատասխան բուժօգնություն դուրս է գրվել:

Հրշեջ-փրկարարները Ռ.Ա.-ի դին մոտեցրել են շտապօգնության ավտոմեքենային, կատարել վթարված ավտոմեքենայի հոսանքազրկման եւ վառելիքաքսուկային նյութերից ճանապարհի լվացման աշխատանքներ. օգնել են ավտոմեքենան տեղափոխել քարշակի վրա:

ՃՏՊ՝ Եղվարդի խճուղում

Հունիսի 14-ին, ժամը 10.44-ին ահազանգ է ստացվել, որ Նոր Գեղի-Եղվարդ ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ, «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ավտոճանապարհի երթեւեկելի հատվածից եւ շրջվել, կա տուժած. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չբացահայտված հանգամանքներում «ՎԱԶ-2106» մակնիշի 34 UV 960 պետհամարանիշի ավտոմեքենան Եղվարդի խճ. թիվ 2 հասցեի մոտակայքում դուրս է եկել ավտոճանապարհի երթեւեկելի հատվածից եւ շրջվել:

Մինչ հրշեջ-փրկարարների կանչի վայր հասնելը ավտոմեքենայի վարորդ Լ. Բ.-ն (ծնվ. 1980 թ.) տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Աբովյան քաղաքի բժշկական կենտրոն, այնուհետեւ՝ Երեւանի «Սրբ. Գրիգոր Լուսավորիչ ԲԿ»:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են ծանր:

Հրշեջ-փրկարարները հոսանքազրկել եւ գազազրկել են ավտոմեքենան:

ՃՏՊ՝ Արագածավան գյուղում

Հունիսի 14-ին, ժամը 20.16-ին ահազանգ է ստացվել, որ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում տեղի է ունեցել ՃՏՊ, «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ շրջվել, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Կար մեկ զոհ եւ մեկ տուժած: Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

Շենքից քաղաքացի է ընկել

Հունիսի 16-ին, ժամը 18.32-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Շիրազի փողոցի թիվ 48 շենքի 5-րդ հարկից քաղաքացի է ընկել. անհրաժեշտ է շտապօգնություն:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ 8-րդ հարկի բնակարաններից մեկի բնակիչ Ս. Չ.-ը (ծնվ. 1991 թ.) ընկել է 8-րդ հարկից, ինչից, մինչ հրշեջ-փրկարարների կանչի վայր հասնելը, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով հոսպիտալացվել է «Արմենիա» ԲԿ, որտեղ բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են ծայրահեղ ծանր:

Հրդեհներ՝ խոտածածկ տարածքներում

Հունիսի 15-16-ը ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման կենտրոնում ահազանգեր են ստացվել հանրապետության տարբեր հատվածների խոտածածկ տարածքներում բռնկված հրդեհների վերաբերյալ:

Մասնավորապես՝ Երեւանի Շիրակի փողոցում այրվել է 25 քմ, Հ. Շիրազի փողոցում ՝ 700 քմ, Նորք Մարաշում՝ 70 քմ խոտածածկ տարածք:

Բոլոր հրդեհները մեկուսացվել են ու մարվել:

միջազգային լուրեր

Հնդկաստանում ավտոբուսի եւ բեռնատարի բախման զոհ է դարձել 12 մարդ

Հնդկաստանի արեւելքում գտնվող Բիհար նահանգում ավտոբուսի եւ բեռնատարի բախման հետեւանքով զոհվել է 12, վիրավորվել՝ 6 մարդ:

Վթարի մեղավորը ավտոբուսի վարորդն է, որը կորցրել է կառավարումը եւ դուրս եկել հանդիպակաց գոտի:

Կալիֆոռնիայի հազարավոր բնակիչներ են տարհանվել անտառային հրդեհի պատճառով

Կալիֆոռնիայի նահանգի Ուոֆորդ Հայթս քաղաքի մի քանի հազար բնակիչներ են տարահանվել Օկրուգում մոլեգնող անտառային հրդեհի պատճառով: Նախօրյակին կրակն ընդգրկել է գրեթե 4 քառակուսի կիլոմետր տարածք եւ ընդհուպ մոտեցել Սեկվոյա ազգային արգելոցին, ինչպես նաեւ Ուոֆորդ Հայթսի արվարձանին: Տեղի իշխանությունները կարգադրել են տարհանել 500-ից ավելի տների բնակիչների: Անտառային հրդեհի դեմ պայքարում ներգրավված են հազարից ավելի հրշեջ եւ ուղղաթիռներ, որոնք ջուր են նետում անտառի դժվարամատչելի մասերում: Իրադրությունը բարդանում է ուժգին քամու պատճառով, որը նպաստում է անտառում կրակի տարածմանը:

Պայթյուն՝ Աչինսկի նավթավերամշակման գործարանում

Հունիսի 15-ի երեկոյան Ռուսաստանի Կրասնոյարկսի երկրամասի Աչինսկի նավթավերամշակման գործարանի բազմաթորման սյունակաթսայում տեղի է ունեցել

պայթյուն, սյունակաթսան քանդվել է, այնտեղից գազ է արտահոսել, որն սկսել է այրվել 400 քառակուսի մետր մակերեսի վրա: Պայթյունի եւ հրդեհի հետեւանքով հինգ մարդ զոհվել է, յոթը՝ հոսպիտալացվել, երեքի ճակատագիրը մնում է անհայտ:

Նեբրասկայում 2 փոռնադո է մոլեգնել

Ամերիկյան Նեբրասկա նահանգի տարածքում իրարից 1,5 կմ հեռավորության վրա 2 տոռնադո է մոլեգնել: Տարերային աղետի կենտրոնում է եղել Փիլջեր քաղաքը, զոհվել է մեկ մարդ, կան տասնյակ տուժածներ: Տեղի իշխանությունների խոսքով, քաղաքում վնասվել է կառույցների 75 տոկոսը, իսկ դրանց կեսը լիովին ոչնչացվել է: Շրջանում արտակարգ դրություն է հայտարարվել:

Չինաստանում ջրհեղեղից մոտ 60.000 մարդ է տուժել

Չինաստանի կենտրոնական Հունան նահանգում մոտ 57 500 մարդ է տուժել ջրհեղեղների հետեւանքով: Ջրհեղեղները

վնաս են հասցրել նաեւ բերքին՝ 4,6 հազար հեկտար տարածքով արտերում: Հուայհուա քաղաքում խաթարվել է տրանսպորտի, էլեկտրահաղորդման լարերի աշխատանքը, վնասվել են տեղի տներն ու ջրամբարները:

Իսկ տեղումներն այս շրջանում չեն դադարի եւ կշարունակվեն մինչեւ հունիսի 19-ը, նախազգուշացրել են օդերեւութաբանները:

Մեկնարկում է դպրոցների անվտանգության գնահատման ծրագիրը

Հունիսի 13-ին Նորարար փորձառական արվեստի կենտրոնում պաշտոնապես ազդարարվեց «Հայաստանում աղետների վնասների կանխարգելման եւ երեխաների խոցելիության նվազեցման» ծրագրի մեկնարկը:

Այն իրականացնելու է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը՝ ԱՄՆ աղետների միջազգային աջակցության գրասենյակի ֆինանսավորմամբ, ՀՀ արտակարգ իրավիճակների, քաղաքաշինության, կրթության եւ գիտության նախարարությունների հետ համատեղ:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել ՀՀ կառավարության կրթական հաստատությունների աղետների ռիսկի նվազեցմանը եւ երեխաների դպրոցների շենքերի խոցելիության գնահատման երաշխավորը:

ԱՄՆ ՄԱԶԳ ժողովրդավարության, առողջապահության եւ սոցիալական բարեփոխումների գրասենյակի տնօրենի պաշտոնակատար Քեթրին Դուն եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ Հենրիետ Արենսն իրենց խոսքում ընդգծեցին, որ ուրախ են աջակցել այս չափազանց կարեւոր նախաձեռնությանը:

Ծրագրի խնդիրները ներկայացրեց ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Տ. Թովմասյանը: Դրանք են՝

• նպաստել դպրոցների անվտանգության քարտեզի մշակմանը, որը ներկայացնում է Հայաստանում սեյսմիկ եւ այլ աղետների ռիսկին ենթակա դպրոցները.

• բացահայտել առավել ռիսկային դպրոցների տիպերը՝ դպրոցների շինարարական նախագծերի վերլուծությունների ուսումնասիրության միջոցով, որի հիմնական նպատակն է պարզել դրանց համապատասխանությունն առկա սեյսմիկ շինարարության նորմերին.

• բացահայտել երկրի ամենախոցելի 60 դպրոցները՝ ամենախոցելի տարածքներում կառուցված դպրոցների ակնադիտական եւ գործիքային մանրամասն ուսումնասիրության միջոցով՝ ներառյալ դպրոցական շենք-շինությունների ուժեղացման կամ փոխարինման նախահաշիվը.

• ՀՀ կառավարությանը ներկայացնել առաջարկներ դպրոցների սեյսմիկ ուժեղացման կամ փոխարինման վերաբերյալ, որը ներառում է առաջնահերթ դպրոցները, անհրաժեշտ գործողությունները, ծախսերը, ֆինանսավորման աղբյուրները եւ ժամանակացույցը:

ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության արեւմտյան ծառայության Կառուցվածքների սեյսմակայունության կենտրոնի պետ Զ. Խլղաթյանը խոսեց դպրոցների անվտանգության գնահատման մեթոդների մասին:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2015 թ. փետրվարին, որից հետո կարող են գործնական քայլեր ձեռնարկվել հայտնաբերված ռիսկային դպրոցների ամրացման ուղղությամբ:

անվտանգությանը բնական վտանգավոր երեւույթներից՝ Հայաստանի առավել ռիսկային տարածքներում գտնվող առավել ռիսկային դպրոցների ազգային գնահատման ծրագրի մշակման եւ իրականացման միջոցով:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԱԻ փոխնախարար Դ. Կարապետյանը՝ ներկաներին փոխանցելով ԱԻ նախարար Ա. Երիցյանի ողջույնի խոսքը.

- Վերջին տարիներին Հայաստանում աղետների ռիսկի կառավարման համակարգը զգալի առաջընթաց է ապրել, որը սակայն լիարժեք չի լինի, եթե հաշվի չառնվեն բոլոր խավերի կարիքները: Աղետների ռիսկերի վերաբերյալ երեխաների իրազեկումն ու ուսուցումը մշտապես գտնվում են ԱԻՆ ուշադրության կենտրոնում: Այն փաստը, որ ծրագիրն իրականացվում է մի քանի կառույցի կողմից, նույնպես վկայում է այն մասին, որ երեխաների անվտանգությունը համընդհանուր մտահոգության առարկա է:

Քաղաքաշինության փոխնախարար Ա. Ղուլարյանը, շնորհակալություն հայտնելով ծրագրին աջակցող միջազգային կազմակերպություններին, նշեց, որ դպրոցների շենքերի անվտանգությունն առանցքային խնդիր է, եւ ծրագրի իրականացման ընթացքում քաղաքաշինության նախարարությունը լինելու է շինարարական նորմերի պահպանման ու

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. հունիսի 12-ից մինչեւ 18-ը ՍՊԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է 11 երկրաշարժ, որից 7-ը՝ 3-ից մինչեւ 5 բալ ուժգնությամբ Թուրքիայի Վան քաղաքի տարածքում: Հունիսի 12-ին Լեռնային Ղարաբաղում՝ Քարվաճառ քաղաքից 30 կմ արեւելք տեղի է ունեցել 3 բալ ուժգնությամբ ստորգետնյա ցնցում: Նույն ուժգնությամբ 2 երկրաշարժ է գրանցվել Իրանի տարածքում, խոյ քաղաքից հյուսիս գտնվող հատվածում: Հունիսի 14-ին 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել Վրաստանում, որի էպիկենտրոնը գտնվում է Դմանիսի քաղաքից 18 կմ հարավ-արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. 6.4 մագնիտուդով երկրաշարժ է գրանցվել Հնդկական օվկիանոսի հարավում: Կոկոսյան կղզիներում հայտարարվել էր ցունամիի վտանգ, ինչը ժամեր անց հերքվել էր: Երկրաշարժի հետեւանքով զոհեր եւ ավերածություններ չկան:

«ՍՊԾ» գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում՝

Հունիսի 20-ին առավելապես հյուսիսային շրջաններում, 22-24-ին շրջանների զգալի մասում, գիշերվա առաջին կեսին եւ երեկոյան ժամերին սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, առանձին վայրերում հնարավոր է կարկուտ, 21-ին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին հարավարեւմտյան 5-10մ/վրկ, ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում 18-23մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 20-21-ին կբարձրանա 2-4 աստիճանով, այնուհետեւ աստիճանաբար նույնքան կնվազի:

Օդի ջերմաստիճանը հունիսի 20-ի գիշերը կտատանվի՝ լեռնային շրջաններում՝ +8...+13, Լոռիում՝ +10...+15, Տավուշում՝ +14...+18, Արագածոտնի նախալեռներում՝ +16...+19, Արարատյան դաշտում՝ +16...+20, Սյունիքի նախալեռներում՝ +10...+15, Սյունիքի հովիտներում՝ +16...+21 եւ Արցախում՝ +18...+21 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը հունիսի 20-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +23...+28, Լոռիում՝ +25...+28, Տավուշում՝ +28...+34, Արագածոտնի նախալեռներում՝ +29...+33, Արարատյան դաշտում՝ +31...+34, Սյունիքի նախալեռներում՝ +25...+28, Սյունիքի հովիտներում՝ +31...+34 եւ Արցախում՝ +29...+32 աստիճանի սահմաններում:

Երեւանում՝

20-21-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: 22-24-ին գիշերվա առաջին կեսին եւ երեկոյան ժամերին հնարավոր է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում 15-20մ/վրկ:

Օդի ջերմաստիճանը հունիսի 20-ի գիշերը սպասվում է՝ +18...+20, ցերեկը՝ +32...+34 աստիճան տաքություն:

Խոշոր հրդեհ՝ Ստեփանակերտում

Հրշեջ-փրկարարները տասնյակ մարդկանց կյանք են փրկել

Ինչպես հայտնում են ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից՝ հունիսի 16-ին, ժամը 13.37-ին ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայության կենտրոնական ահազանգման կենտրոնի կառավարման կետում Ստեփանակերտի փրկարարական վարչության ահազանգման կենտրոնից տեղեկություն է ստացվել, որ Ստեփանակերտի Ազատամարտիկների 36 հասցեում՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոնի շենքի լսարաններից մեկում հրդեհ է բռնկվել:

Դեպքի վայր են մեկնել ընդհանուր թվով 7 հրշեջ մեքենա, ինչպես նաեւ արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման 2 հատուկ փրկարարական մեքենա: Հրդեհաշիջմանը զուգահեռ իրականացվել են տարհանման աշխատանքներ:

Հրդեհը բռնկվել է առաջին հարկի լսարաններից մեկում եւ արգելափակել ելքերը, լուսամուտների մի մասը: Հրդեհի բռնկման պահին շենքում գտնվում էին 150 ուսանող եւ 30 դասախոս ու աշխատակից: Հրդեհը մեկուսացվել է ժամը 14.37-ին, մարվել՝ 15.50-ին: Փրկարարական աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ունեցել նաեւ ԼՂՀ ոստիկանության աշխատակիցները: Դեպքի վայրում էին հանրապետության վարչապետը, շահագրգիռ գերատեսչությունների ղեկավարներ, բարձրաստիճան պաշտոնյաներ:

Հրդեհի հետեւանքով այրվել է 1 լսարան, հրդեհի բռնկման պատճառը եւ հասցված վնասի չափը ճշտվում են:

ԱԻՆ հոբելյար-վետերանը. Հենրիկ Արաբյան

Վերջերս լրացավ ՀՀ ԱԻՆ վետերան Հենրիկ Արաբյանի ծննդյան 75-ամյակը: Նա երկար տարիներ աշխատել է նախկին ՆԳՆ հրշեջ պահպանության վարչությունում եւ հանդիսանում է ՀՀ ԱԻՆ վետերանների խորհրդի անդամ: Օժտված լինելով պատասխանատվության բնատուր զգացումով՝ կյանքի բերումով որտեղ էլ հայտնվեր, աշխատել է օգտակար լինել, մնայուն գործ անել, օգնել ինչով կարող է իր ընկերներին ու ծառայակիցներին: Վետերանի հետ հանդիպումն ու զրույցը հետաքրքիր էր՝ լի աշխատանքային հարուստ կենսագրության բազմաթիվ հիշարժան պահերով, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք ստորեւ:



Հենրիկ Անդրանիկի Արաբյանը ծնվել է հունիսի 10-ին, 1939 թ. Երեւանում, բանվորի ընտանիքում:

1956 թ. ավարտել է Երեւանի թիվ 74 դպրոցն ու նույն տարում ընդունվել Երեւանի պետական համալսարան: Թե դպրոցում, թե համալսարանում եղել է ակտիվ աշակերտ, ուսանող՝ ընտրվելով կոմերիտմիության ղեկավար մարմիններում՝ որպես քարտուղար: Ուսանողական վերջին տարիներին կատարել է նաեւ դասախոսի պարտականություններ:

20 տարեկանում ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը (միակ միջավայրը, որտեղ հնարավոր էր դրսեւորվել որպես հասարակական, նաեւ քաղաքական գործիչ՝ նշում է Հ. Արաբյանը):

1961-63 թթ. աշխատել է Հրազդանի շրջանում՝ որպես միջնակարգ դպրոցի տնօրեն, ապա՝ Հրազդանի շրջկոմի կոմերիտմիության առաջին քարտուղար, Հրազդանի, Աբովյանի ու Սեւանի շրջանների կոմերիտական կազմակերպությունների Կենտկոմի կազմակերպիչ:

1963 թ. տեղափոխել են Երեւան: Սկզբում աշխատել է ՀԼԿԵՄ Կենտկոմում, ապա նորից ընտրվել ԵՊՀ կոմերիտական կազմակերպության 1-ին քարտուղար՝ կատարելով նաեւ դասախոսական աշխատանք:

1966-69 թթ. աշխատել է ՀԽՍՀ բարձրագույն կրթության նախարարությունում՝ որպես նախարարի օգնական-տեսուչ:

1969-74 թթ. աշխատանքի է անցել Կոմկուսի Երեւանի Սպանդարյանի, ապա՝ 26 կոմիսարների անվան շրջանների աշխատակազմերում՝ որպես հրահանգիչ, բաժնի վարիչ: Բազմիցս ընտրվել է շրջանային եւ Երեւանի քաղաքային ժողովրդական դեպուտատ:

1974-78 թթ. նշանակվել է Երքաղսովետի գործկոմի կինոֆիկացիայի քաղաքային վարչության պետ:

1978-82 թթ. նշանակվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության ավագ հրահանգիչ:

1982-92 թթ. աշխատել է ՆԳՆ կենտրոնական աշխատակազմում՝ որպես քաղբաժնի պետ, պաշտոնի բերումով վարել հանրային հեռուստաընկերության «Մարտական պոստում» հաղորդաշարը: Այնուհետեւ տեղափոխվել է ՆԳՆ հրշեջ պահպանության վարչություն:

1992 թ. անցնելով թոշակի՝ միաժամանակ շարունակել է աշխատել: Մասնագիտությամբ իրավաբան լինելով՝ 10 տարի աշխատել է «Պրոմեթեյ» ԲԲ ընկերությունում՝ զբաղեցնելով իրավաբական վարչության պետի, բանկի իրավաբանի եւ աշխատակազմի գրասենյակի պետի պաշտոնները:

1970-ական թվականների վերջին եւ 80-ականների սկզբին՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի աշխատակազմում աշխատելու ժամանակ զբաղվել է հայկական գյուղերի անվանափոխության հարցով: Այն ժամանակ խնդիր էր դրված Հայաստանի բոլոր օտար անուն ունեցող գյուղերի անունները փոխել իրենց հին հայկական կամ նոր, բարեհունչ ու հայեցի անունով.

- Որոշումը կար, բայց մեկը պիտի այն իրագործեր: Ուսումնասիրելով պատմությունը, հանրագիտարանները, խոսելով տեղի բնակիչների հետ, պարզելով անվան ծագումն ու նշանակությունը՝ ես կարողացա նախապատրաստել Հայաստանի 104 գյուղի անվանափոխությունը: Այն ժամանակ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալը Հովհաննես Բաղդասարյանն էր: Երբ այս գործի վրա աշխատում էի, իմ բաժնի վարիչը խորհուրդ տվեց, որ պարբերաբար զեկուցեմ արած աշխատանքի մասին: Երբ գնացի Հ. Բաղդասարյանի մոտ ու ներկայացրի, թե ինչ եմ արել, ասաց. «Տղա ջան, ինչի՞ ես էսքան արագ աշխատում»: Ասացի՝ բայց մի՞թե սա արագ աշխատել է: Ասաց. «Սա, որ արեցիր, հետո ինչո՞վ ես զբաղվելու»: Ասել է թե՝ պիտի ժամանակ ձգեի, որ զբաղմունք ունենայի… (ծիծաղում է)…

Երկրում մտավորականների ու երիտասարդության շրջանում 1965 թ. խմորումներ էին սկսվել՝ կապված հայոց ցեղասպանության ճանաչման հետ, Հ. Արաբյանը Երեւանի պետական համալսարանի կոմերիտմիության կոմիտեի առաջին քարտուղարն էր: Անհրաժեշտ էր քաղաքականություն մշակել՝ արդյո՞ք համալսարանի ուսանողությունը պիտի մասնակցի ապրիլի 24-ի ցույցերին, թե՞ ոչ.

- Ես գնացի նրան, որ ուսանողությունը մասնակցի այդ ցույցին: Ինձ աշխատանքից հանեցին, բայց 2 օր անց նորից վերականգնեցին: Ամեն դեպքում այն տարիներին նման հարցերում Հայաստանի ղեկավարության աջակցությունը կար:

Հ. Արաբյանը համակարգ (ոստիկանություն) է տեղափոխվել 1982 թվականին՝ կուսակցության ղեկավար մարմնի որոշմամբ, որպես քաղբաժնի պետ: Մոսկվայում նա հանդիպում է Բրեժնեւի փեսայի՝ Յուրի Չուրբանովի հետ, որն այն ժամանակ ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարի առաջին տեղակալն էր: Հենց վերջինս էլ հաստատում է Հ. Արաբյանի թեկնածությունը քաղբաժնի պետի պաշտոնում: Այնուհետեւ ՆԳՆ հրշեջ պահպանության վարչությունում ղեկավարել է կադրերի բաժինը.

- Ականջովս ընկել էր, որ կադրերի բաժնում մարդիկ կան, որ շարքայինին վկայական, կոչում տալու կամ տեղից տեղ տեղափոխելու համար մանր-մունր չարաշահումներ էին անում: Ես եկա, բաժնում մի քանի հոգու ասացի. «Դուք ավելի լավ է գնաք, մենք միասին չենք կարող աշխատել»: Այդ տարիներին հրշեջ պահպանությունում այնպիսի մթնոլորտ էր ստեղծվել, որ շարքային անձնակազմը չէր համալրվում: Բժշկական ծառայության ղեկավարին համոզեցի, որ մարդ հավաքագրելու համար պիտի արտագնա նիստեր անցկացնենք, անձամբ գնանք շրջաններ, հանդիպենք, բացատրենք, տեղում բուժզննում անցկացնենք ու լրացնենք անձնակազմը:

Այսպիսի մոտեցումը լավ արդյունք է տալիս՝ հրշեջ պահպանության վարչությունը համալրվում է երիտասարդ կադրերով: Աստիճանաբար վերանում է «պաժառնիկ չե՞ս» քամահրական արտահայտությունը եւ փոխվում վերաբերմունքը հրշեջների նկատմամբ: Հիմա էլ ԱԻՆ համակարգում եւ, անգամ վետերանների մեջ, կան մարդիկ, որոնց այս համակարգ է բերել Հ. Արաբյանը:

ԱԻՆ վետերանը գտնում է, որ նախկին ՆԳՆ հրշեջ պահպանության վարչությունը եւ ներկայիս արտակարգ իրավիճակների նախարարությունը սկզբունքորեն տարբեր կառույցներ են.

- Հիմա, երբ լսում եմ, որ ինչ-որ տեղ քարաթափ է եղել կամ ճանապարհ պիտի մաքրել կամ փակված դուռը բացել, մեր տղաներն են հասնում, ես տեսնում եմ, որ պետականություն կա: Նույնիսկ ամենահասարակ դեպքի համար, երբ մի մարդ մի բահով կարող է ճանապարհ մաքրել քարաթափից, էլի մարդն է անում, բայց պիտի մի կառավարման համակարգ լինի, որ ասի՝ ինչ, ոնց: Ես տեսնում եմ, որ համակարգ է ստեղծվել, որ «հայր» ունի: «Հայր», որի ներքին խորությունը բազմաշերտ է ու բազմաբովանդակ: Ես դրանց մեջ շատ մեծ հոգատարություն եմ տեսնում՝ մարդու, հայի, երիտասարդի, մեր (վետերանների) նկատմամբ, իսկ դա ամենակարեւորն է: Այս ծառայությունը գուցե շատ ավելին է անում անձի պաշտպանության համար, քան մնացած բոլոր ծառայությունները միասին: Մյուսները կոնկրետ մեկին են օգնում կամ մի հարցով, իսկ այս համակարգը մի ամբողջ դաշտ է ստեղծել: Շատերն եկան ու գնացին, սակայն այսօր ես այլ բան եմ տեսնում՝ խորություն, հայրենասիրություն, մարդու եւ հայրենիքի նկատմամբ ուշադրություն: Համոզված եմ, որ այս նոր ծառայությունը նորացված Հայաստան երկրի ապագայի կերտման տեսակն է:

Եկել էի նախարարության պոլիկլինիկա՝ բուժզննման… Պետից սկսած՝ բոլորը շատ հոգատար ու ուշադիր էին: Չէի սպասում, որ այստեղ այսպիսի վերաբերմունք կցուցաբերեն… Չգիտեմ՝ ինչքան եմ «հետեւիցս ընկնելու» մինչեւ ինձ բուժեն… (ծիծաղում է):

Հ.Գ. *Երկարամյա ծառայությունից հետո թոշակի անցնելու կապակցությամբ այն ժամանակվա ներհին գործերի նախարարի հրամանով Հ. Արաբյանը դրամական պարգեւատրում է ստանում, որը թոշակի հետ միասին բավականին խոշոր գումար էր կազմում: Վերջինս գումարը պահ է տալիս բանկին… Սակայն մի քանի տարի անց՝ «փողը փոխվելուց» հետո վետերանի երկար տարիների վաստակը դառնում է ընդամենը 157 դրամ…*

Գոհար ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գերմանիայի պատվիրակությունն՝ ԱԻ նախարարությունում

Հունիսի 18-ին ՀՀ ԱԻ նախարարություն էր այցելել ՀՀ-ում Գերմանիայի փոխդեսպան Նադիա Լիխթենբերգի ղեկավարած՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պատվիրակությունը:

Այցի նպատակն էր դեսպանությանն անվտանգության եւ ճգնաժամային իրավիճակի կանխարգելման հարցերով խորհրդատվության տրամադրումը:

ԱԻ նախարարության աշխատակազմի ղեկավար Համլետ Հակոբյանը շնորհակալություն հայտնեց այցի համար, նշելով, որ երկու երկրների համագործակցությունը բարձր մակարդակի վրա է գտնվում: Հ. Հակոբյանը պատվիրակությանը ներկայացրեց ԱԻ նախարարության ձեռքբերումները, նպատակներն ու նախագծերը. «Հայաստանի Հանրապետությունում տեղադրված են 156 սեյսմիկ կայան, որոնք արձագանքում են նույնիսկ թեթեւ ցնցումներին: Մեզ մոտ գործում են նաեւ ռադոնային կայաններ, իսկ շուտով տեղի կունենա Գառնիի վերաշորոգված դիտակայանի բացումը, որտեղ տեղադրված է 370 մ երկարությամբ դեֆորմոգրաֆ»:

Հանդիպմանը մասնակից ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, գեներալ-մայոր Նիկոլայ Գրիգորյանը, պատասխանելով պատվիրակության հարցերին, նշեց. «Բնակչության իրազեկումը մեր առաջնային խնդիրն է: Հիմա մշակվում են բոլոր նոր միջոցները՝ արտակարգ իրավիճակի արագ ազդարարումը բարելավելու եւ իրականացնելու համար»:

Գերմանիայի պատվիրակությանն առաջարկվեց ստեղծել համատեղ նախագիծ՝ Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի դեսպանատների օրինակով, ձեւավորել երկկողմանի աշխատանքային խումբ՝ մշակելով տեղեկատվության փոխանակման ծրագրեր:

Ստեղծվել է ԱԻՆ Երեւանի վեթերանների խորհուրդը

Արտակարգ իրավիճակների նախարարության վետերանների խորհրդի ձեւավորումից հետո ԱԻ նախարարի հանձնարարությամբ սկսվեց վետերանների խորհուրդների եւ մարզային կառույցների ձեւավորման գործընթացը:

Արդեն ձեւավորվել են բոլոր մարզային կառույցները, ընտրվել են մարզային խորհուրդները եւ դրանց նախագահները:

Հունիսի 19-ին ԱԻՆ խորհրդակցությունների դահլիճում տեղի ունեցավ Երեւանի եւ մայրաքաղաքի վարչական շրջանների վետերանների խորհուրդների ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին Երեւանի 140 ԱԻՆ վետերան: Ժողովին մասնակցում էին ԱԻ նախարարի խորհրդական Անդրանիկ Հակոբյանը, Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արթուր Կարապետյանը, վետերանների խորհրդի պատվավոր նախագահ Ռոբերտ Թադեւոսյանը, ԱԻՆ վետերանների խորհրդի նախագահ Ներսես Հեպոյանը, ԱԻՆ Երեւան քաղաքի փրկարարական վարչության ղեկավար կազմը: Մայրաքաղաքի վետերաններին ողջունեցին եւ հիմնադիր ժողովի աշխատանքներին հաջողություններ փոխանցվեցին ԱԻ նախարար Արմեն Երիցյանի եւ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի անունից: Հիմնադիր ժողովը ընտրեց մայրաքաղաքի՝ 9 հոգուց բաղկացած վետերանների խորհուրդ: ԱԻՆ Երեւան քաղաքի վետերանների խորհրդի նախագահ ընտրվեց Վաչագան Սրապյանը՝ ԱԻՆ վետերանների խորհրդի նախագահի տեղակալը:

Չեխիա-Հայաստան՝ նոր համագործակցություն

ՀՀ ԱԻ նախարարության եւ Չեխիայի Հանրապետության Գիտությունների ակադեմիայի միջեւ համագործակցության շրջանակներում հունիսի 16-ին Երեւան ժամանեցին ակադեմիայի՝ Երկրակեղեւի կառուցվածքի եւ մեխանիկայի ինստիտուտի սեյսմոլոգիայի բաժնի գիտաշխատողներ՝ դոկտորներ Պավել Կալենդան եւ Լիբոր Նոյմանը: Չեխական կողմը կաջակցի ԱԻ նախարարությանը Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի վերագործարկման եւ վերազինման գործում: Նախատեսվում է դիտարանի թունելի սենյակներից մեկում հնի փոխարեն տեղադրել նորագույն թվային թեքաչափ, որի միջոցով կչափվեն երկրակեղեւի դեֆորմացիաները՝ որպես հնարավոր ուժեղ երկրաշարժի նախապատրաստման ուղղակի նախանշան:

Գառնի մեկնելուց առաջ հյուրերն այցելեցին ԱԻ նախարարության տարածքում տեղակայված գրունտի ուժեղ շարժումների հայ-ճապոնական դիտակայան, ծանոթացան հայ-ամերիկյան ակտյուեյտոր եզակի սարքին, եղան ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնում:

Իննօրյա այցի ընթացքում նախանշվելու են սկիզբ առած համագործակցության ընդլայնման հետագա քայլերը:

Գառնիում տեղադրվում է նորագույն թեքաչափ

Գառնիի երկրաֆիզիկական դիտարանում չեխ գիտաշխատողներ, դոկտորներ Պավել Կալենդայի, Լիբոր Նոյմանի եւ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության ծառայության մասնագետների ջանքերով սկսվել են նորագույն թվային թեքաչափի տեղադրման աշխատանքները:

Գերզգայուն սարքի մոնտաժման աշխատանքները պահանջում են մեծ մասնագիտական հմտություն եւ ընթացքում ծագած տեխնիկական ու մասնագիտական խնդիրների լուծում: Երկրակեղեւի դեֆորմացիաների գրանցման տվյալներն իրական ժամանակում կստանան եւ հայկական, եւ չեխական կողմը:

Կողմերի միջեւ կնքված համաձայնագրի շրջանակներում քննարկումների ընթացքում ձեռք է բերվել հետագա համագործակցությունն ընդլայնելու վերաբերյալ պայմանավորվածություն:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

www. mes.am
Հասցե. Երեւան, Ավան, Աճառյան 1
Հեռ. 61-19-24 (ռեկտոր), 61-47-60, 61-19-21
Ռեկտոր. Համլետ Շմավոնի Մաթեւոսյան, փ/ծ գնդապետ
Ուսուցման ձեւը. առկա, հեռակա
Ընդունելությունը. Մաթեմատիկա (բանավոր), Հայոց լեզու (թելադրություն), Հայաստանի աշխարհագրություն (հարցազրույց):

Ակադեմիան իրականացնում է՝

1. Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագիր՝ բակալավրի և մագիստրոսի որակավորման աստիճանով առկա ու հեռակա ուսուցմամբ,

2. Միջին մասնագիտական կրթական ծրագիր:

Մասնագիտություն	Ուս. տեւող. առկա	Ուս. տեւող. հեռակա	Վարձի չափը (հազար դրամ) 2014/2015 ուս. տարի (առկա)	Վարձի չափը (հազար դրամ) 2014/2015 ուս. տարի (հեռակա)
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ				
Հրդեհային պաշտպանություն**	4տ	5տ	Անվճար	180 140*
Փրկարարական գործ**	4տ	5տ	Անվճար	180 140*
Ճգնաժամային կառավարում (մենեջմենթ)	4տ	5տ	260	200 160*
Կառավարում	4տ	-	300	-
Քաղաքացիական պաշտպանություն	4 տ	5տ	240	180 140*
Պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում (մանկավարժություն)	4տ	5տ	240	180 140*
Տրանսպորտային եւ հրշեջ փրկարար հատուկ տեխնիկայի շահագործում եւ սպասարկում	4տ	5տ	240	180 140*
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ				
Փրկարարական գործ	2 տ	-	235	-
Ճգնաժամային կառավարում (մենեջմենթ)	-	2,5տ	-	240 200*

Ծանոթություն.
**** Համակարգում աշխատողների համար***
***** Նշված մասնագիտությունների ուսանողները չեն օգտվում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից տարկետման իրավունքից:***

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» պետական ոչ առեւտրային կազմակերպության միջին մասնագիտական կրթական ծրագիր

www. mes.am
Հասցե. Երեւան, Ավան, Աճառյան 1
Հեռ. 61-19-24 (ռեկտոր), 61-47-60, 61-19-21
Հասցե. Ստեփանավան, Թումանյան 18
Հեռ. 0-256) 2-33-41
Ուսուցման ձեւը. առկա

Կրթության հիմքը՝

- Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությամբ (2 տարի),
- Հիմնական ընդհանուր կրթությամբ (3 տարի),

Ակադեմիան միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսուցումն իրականացնում է Երեւանում (ուսման վարձը՝ 130.000 դրամ) եւ Ստեփանավանում ուսման վարձը՝ 90.000 դրամ):

Մասնագիտություն	Ուսման տեւողությունը	
	միջնակարգ (լրիվ) ընդհանուր	հիմնական ընդհանուր
Հրդեհային պաշտպանություն	2 տարի	3 տարի
Հրշեջ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և շահագործում		
Մենեջմենթ (կառավարում արտակարգ իրավիճակներում)		

Միջին մասնագիտական կրթական ծրագրով գերազանց եւ լավ գնահատականներով շրջանավարտները կարող են առանց ընդունելության քննությունների ուսումը շարունակել Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթական ծրագրով (բակալավրիատի) 2-րդ կուրս:

հոգեբանի անկյուն

Ընթերցանությունը՝ հոգեւոր աշխարհի զարգացման պայման

«Ես չեմ սիրում կարդալ». բազմիցս լսել ենք այս խոսքը մարդկանցից, ովքեր իրենց կյանքի ընթացքում մեկ անգամ գիրք չեն բացել կամ չեն էլ փորձել:

Ոմանց համար ընթերցանությունը կյանքի անբաժան մասն է, հաճելի մի զբաղմունք, իսկ ոմանց համար էլ ձանձրալի է՝ ժամանակի անիմաստ վատնում: Ենթադրվում է, որ այն մարդիկ, ովքեր կարդալ չեն սիրում, իրականում չեն կարողանում ընդգրկվել սյուժեի մեջ, գայթակղվել մտացածին կամ իրական հերոսներով, վերապրել հերոսների կերպարները եւ այլն: Եկեք փորձենք հասկանալ երկու դեպքն էլ:

Այսօրվա աշխարհում կյանքն այնքան արագ է ընթանում, որ մարդիկ, գերզբաղված լինելով հանդերձ, փորձում են ամեն ինչ հասցնել եւ քայլել ժամանակի պահանջներին համընթաց:

«Որքա՞ն հաճախ եք գրադարան այցելում». այս հարցը գուցե անսովոր եւ տարօրինակ թվա երիտասարդությանը, սակայն վիճակագրական տվյալներով այսօր գրադարան գնացողների եւ ընթերցողների թիվը զգալիորեն քչացել է: Փորձենք հասկանալ պատճառները, որոնք դրդում են փախչել ընթերցանությունից: Շատերն ասում են՝ երբ ձեռքն են վերցնում գիրքը, առաջին տողերը կարդալուց հետո միտքն սկսում է այլ ուղղությամբ աշխատել, չեն կարողանում կենտրոնանալ գրքի նյութի վրա: Այստեղից կարելի է եզրակացնել. եթե մարդու միտքը զբաղված է այլ անհանգստացնող դեպքերով, ապա նա չի կարողանում լիցքաթափվել եւ կարդալ: Սակայն շատերը հավատացնում են, որ հենց ընթերցանությունն է նրանց հիմնական լիցքաթափող եւ հանգստացնող դեղամիջոցը: Այսինքն՝ ընթերցել սիրելը կախված է մարդու անհատական առանձնահատկություններից: Օրինակ, ընթերցել հատկապես դժվար է հաջողվում տագնապային մարդկանց, քանի որ նրանք սիրում են ամեն ինչ վերահսկողության տակ պահել: Նրանց թվում է, երբ իրենք թերթում են գրքի էջերը, ապա այդ ժամանակ այլ տեղ ինչ-որ վատ կամ ինչ-որ կարեւոր իրադարձություն է տեղի ունենում, որին իրենք չեն մասնակցում: Նման մարդկանց անհրաժեշտ է երաշխիք ունենալ, որ ամեն ինչ մեր աշխարհում նորմալ է ընթանում եւ այն կարելի է որոշ ժամանակ վերահսկողությունից բաց թողնել: Երբ մարդը ներդաշնակ է իր եւ իր ներաշխարհի հետ, ապա նա կարող է առանձնանալ գրքի աշխարհում, ընկղմվել սյուժեի մեջ:

Չընթերցողների թվի մեծացումը պայմանավորված է նաեւ հետեւյալով. այսօր հասարակությունը նախընտրում է ընթերցել թեթեւ, ոչ լուրջ, ոչ խորիմաստ, միտքը չծանրաբեռնող, չհոգնեցնող բովանդակություն ունեցող գրքեր, թերթեր, ամսագրեր, որոնք չեն նպաստում մտքի եւ ինտելեկտի զարգացմանը: Ինտերնետը մյուս պատճառն է՝ այսօրվա ժամանակին լիովին համահունչ տարբերակ, որը հնարավորություն է տալիս մարդուն գտնելու ամբողջ անհրաժեշտ ինֆորմացիան՝ առանց տնից դուրս գալու եւ ժամանակ ծախսելու: Տարբերակներից է նաեւ հետեւյալը. հոգնած տուն գալով, ավելի հեշտ է միացնել հեռուստացույցը եւ լիցքաթափվել, քան վերցնել գիրքը եւ կարդալ:

Ընթերցանությունը կիրառվում է կրթություն ստանալու, սովորելու համար, կյանքում առաջ գնալու եւ լավ աշխատանք ձեռք բերելու համար: Երիտասարդներն ավելի ու ավելի հազվադեպ են մոտենում գրքին, իսկ երբ մոտենում են, ապա խիստ անհրաժեշտության դեպքում: Մարդը կարող է հաճույք ստանալ ընթերցանությունից, եթե պարտավորված չի ընթերցում, այլ՝ երբ ցանկանում է ու երբ իրեն հաճելի է:



Այսօրվա երիտասարդը հաճույք չի ստանում ընթերցանությունից, բազմիցս են հնչում հետեւյալ խոսքերը. «Չեմ սիրում ընդհանրապես կարդալ, նյարդերս չեն հերիքում», «Ընթերցանությունից զատ ավելի հետաքրքիր գործեր կան», «Ես ակտիվ հանգիստն եմ գերադասում» եւ այլն:

Ընթերցանությունը մեծ կապ ունի դաստիարակության, ազգային մտածելակերպի, ազգային առանձնահատկությունների հետ: Եթե տվյալ հասարակությունում ամեն տեղ՝ մետրոյում, սրճարանում, այգիներում մարդիկ կարդում են, ինչպես եվրոպական շատ երկրներում, ապա ընթերցանությունն ընկալվում է իբրեւ շատ կարեւոր եւ անհրաժեշտ մի գործընթաց: Իսկ այն ազգային մտածելակերպում, որտեղ ընթերցանությունը տեղ չունի, դժվար կլինի հասարակությանը համոզել, որ ընթերցանությունը մարդու զարգացման գլխավոր պայմաններից մեկն է: Եթե ընտանիքում ծնողները շատ են ընթերցում, եւ երեխան ամեն օր տեսնում է այդ օրինակն իր առջեւ, ապա ընթերցանության նկատմամբ սեր անպայման կլինի: Սերը դեպի ընթերցանություն երեխաների մեջ սերմանելու հիմնական ճանապարհներից է լսել սովորեցնելը: Երեխաները, մինչեւ ինքնուրույն կկարողանան գիրք կարդալ, ամբողջ ինֆորմացիան ընկալում են լսելով: Ուստի ծնողները պետք է սկզբնական շրջանում շատ կարդան նրանց համար:

Բնակչության զգալի մասն ընդհանապես չի ընթերցում, հատկապես վտանգավոր իրավիճակում են գտնվում երեխաները եւ դեռահասները, որոնք շատ քիչ են հետաքրքրված ընթերցանությամբ: Այս հարցը լուրջ մտահոգության առիթ պետք է լինի ինչպես ծնողների, այնպես էլ պետության համար: Քանի որ պետությունը կանգնում է անգրագետ եւ ոչ ճիշտ արժեքներով մեծացող սերնդի առջեւ, ովքեր դառնալու են ապագա ղեկավարներ:

Այսօր մարդկությունը կանգնում է նաեւ մի շատ կարեւոր հարցի՝ մարդու հոգեւոր աշխարհի ոչ զարգացվածության, ոչ բավարարվածության առջեւ, որը կարող է հանգեցնել հոգեբանական եւ հոգեւոր շատ ավելի բարդ խնդիրների:

Բազմիցս հոգեբանների եւ սոցիոլոգների կողմից ապացուցվել է, որ մարդու ինտելեկտի զարգացման հիմնական խթանիչներից է ընթերցանությունը: Ընթերցող մարդիկ ավելի արագ են ընկալում ամբողջական ինֆորմացիան, ավելի արագ են վերլուծում այն, համարժեք են գնահատում իրավիճակը, ճիշտ եւ օբյեկտիվ որոշումներ են կայացնում, ունեն հիշողության մեծ ծավալ, ունեն ակտիվ երեւակայություն, ավելի ինքնուրույն են, ավելի լավ են ընկալում կապերը երեւույթների միջեւ եւ այլն: Ընթերցանությունը զարգացնում է մարդու երեւակայությունը, որքան վաղ տարիքից է մարդը կարդում, այնքան ավելի զարգացած է լինում նրա երեւակայությունը, խոսքը, ներքին կերպարներ ստեղծելու կարողությունը, մտքերի «կենդանությունն» ու պատկերավորությունը, ընթերցանությունը զարգացնում է մարդու զգացմունքային եւ հուզական ոլորտը: Որքան վաղ տարիքից է երեխան գիրք կարդում, այնքան նա ավելի վառ է կարողանում պատկերացնել մտացածին իրավիճակն ու կերպարները: Այսինքն՝ ընթերցանությունը զարգացնում է հոգեւոր հասունություն, ձեւավորում է կիրթ եւ սոցիալական արժեքներով տոգորված անձ:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

1. Պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության Երեւանի հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34-3.3-45):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց ու քաղաքացիների կողմից հրդեհային եւ տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման աշխատանքներին:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 26.08.2014 թ.՝ ժամը 10:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

2. Պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության Երեւանի հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34-3.3-46):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց ու քաղաքացիների կողմից հրդեհային եւ տեխնիկական անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման աշխատանքներին:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 28.08.2014 թ.՝ ժամը 10:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները, արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար նաեւ պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի բ) ենթակետում նշված՝ իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9.30-ից մինչեւ 12.30-ը:

Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթի պետք է ներկայանան ՀՀ անձնագրով:

Նշված թափուր պաշտոնների համար դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 04.07.2014 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կարող են դիմել նախարարության աշխատակազմ **(ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 31-77-30):**



Ահ հանրագիտարան

Ռոբոտներն ու ձեր անձնական կյանքը. որտե՞ղ է թաքնված վտանգը

Վաղ թե ուշ ռոբոտները կստրկացնե՞ն մարդկանց: Անհեթեթություն: Բայց կա ռոբոտներին առնչվող մեկ այլ խնդիր, որը սովորաբար մենք անտեսում ենք:

Հաշվողական մաթեմատիկայի ոլորտում աշխատող գիտնական Ջոսս Ռայթը ռոբոտներին սովորեցնում է հուսից հանել մարդուն: Ռայթն աշխատում է Նաո անունով մարդանման ռոբոտի հետ: Փորձի էությունն է՝ Նաոն փողոցում ցուցադրաբար մոտենում է մարդկանց, խառնվում նրանց անձնական գործերին, զզվեցնում իր ներկայությամբ՝ մի խոսքով փորձում հուսից հանել: Օրինակ, անծանոթի հետ հանդիպման դեպքում Նաոն կարող է հենց տեղում համացանցում դիմացինի մասին տեղեկություններ որոնել, կամ միանալ նրա բջջային հեռախոսին, պարզել, թե դրա սեփականատերն այդ օրը որտեղ է եղել եւ եթե ճաշել է ռեստորանում հարցնել՝ համե՞ղ էր ապուրը:

Նաոի մասնակցությամբ փորձը «Մարդիկ եւ ռոբոտները հանրային միջավայրում» ծրագրի մի մասն է: Ծրագրի նպատակն է հետազոտել մարդ-ռոբոտ փոխհարաբերություններն ու շփումը, պարզել, թե ի՞նչ է լինում, երբ չարաճճի մեքենան մեր մասին գիտի ավելին՝ քան մենք կարծում ենք: Ռայթը մեկն է այն բազմաթիվ գիտնականներից, ովքեր փորձում են հասկանալ՝ կարո՞ղ ենք արդյոք վստահել ռոբոտներին, որոնք ուր որ է վերջնականապես կդառնան մեր կյանքի մի մասը: Եթե հավատանք Հոլիվուդին՝ ամենամեծ վտանգը գալիս է ռոբոտների աներեւակայելի ուժից եւ ինտելեկտից: Այդ վտանգը սպառնում է մարդկության գոյությանը:

Սակայն գիտնականներն ու հետազոտողները պնդում են, որ ռոբոտների եւ ռոբոտատեխնիկայի ապագան այլ կերպ է ուրվագծվելու: Եթե ռոբոտները տարածենք ամենուր, ապա նրանք կկարողանան մշտապես հետեւել մեզ եւ պահպանել մեր մասին հավաքած տեղեկությունը: Հետեւաբար՝ ամենամեծ վտանգը՝ մեր անձնական կյանքի սպառնալիքն է: Գուցե անհանգստանալու ժամանա՞կն է: Արդեն տասնյակ տարիներ ռոբոտներն աշխատում են արդյունաբերության տարբեր ճյուղերում: Ռոբոտների մի մասը պատասխանատու է մեր տների մաքրության համար, այլ ռոբոտներ հնարավոր է շուտով սկսեն մեր թիկնապահը դառնալ, կամ հոգ տանել տարեց մարդու մասին: Միայն անցած մեկ տարում Google ընկերությունը, որ լրջորեն մշակում է առանց վարորդի մեքենա ունենալու ծրագիրը, գնել է ռոբոտատեխնիկայի ոլորտում աշխատող ութ ընկերություն: Սակայն, չնայած տեխնոլոգիաների եւ արհեստական ինտելեկտի հարցերում հաջողություններին՝ դեռ վաղ է խոսել բանական ռոբոտի մասին:

Ռոբոտների հնարավորությունները կարող են ընդլայնել ամպային տեխնոլոգիաներն ու ծրագրերը (cloud computing), որոնք գնալով ավելի ու ավելի լայն տարածում են ստանում համացանցում: Օրինակ, լինելով կապի մեջ՝ on-line, ռոբոտը կարող է տեղեկություններ ստանալ, օգնություն խնդրել՝ միաժամանակ շարունակելով տեղաշարժվել ողջ աշխարհով: Սա տեխնոլոգիական արդեն սկսված զարգացման հերթական փուլն է: «Համակարգիչներն ու ամեն տեսակ տվյալներ փոխանցող սարքերը ավելի ու ավելի մեծ տեղ են զբաղեցնում մեր կյանքում, մեր կենցաղում եւ մեզ համար հարմար միջավայրում: Ի վերջո, ռոբոտները ներկայացնում են համակարգիչների աճող պահանջարկը, իսկ համակարգչի հետ մենք որոշակի շփման մեջ ենք: Ապագայում այդ շփումը կդառնա ավելի բազմազան, բնական եւ կտարածվի ամենուրեք», - նկատել է Օքսֆորդի համալսարանի համացանցի ինստիտուտի գիտաշխատող Ջոսս Ռայթը:

Չի բացառվում, որ սա է պատճառներից մեկը, որի արդյունքում Google-ի նման հզոր ընկերությունները հաճույքով են զբաղվում ռոբոտատեխնիկայով: Որոշ հետազոտողներ, սակայն, մտահոգված են: Նրանք կարծում են, որ կխաթարվի անձնական կյանքի գաղտնիությունն ու ռոբոտները կդառնան այդ ընկերությունների ֆիզիկական ներկայացուցիչներ՝ մարդու կյանքի մասին լայն տեղեկություններ քաղելու հասանելիությամբ: Օրինակ, հավաքարար-ռոբոտը կարող է ձեր եւ ձեր կացարանի մասին տեղեկություններ հավաքել՝ փոշեկուլով աշխատելուն զուգահեռ: Հետո նա այդ տեղեկությունները՝ ձեր հոբբիի, նախասիրությունների ու այդպես շարունակ, կհաղորդի այն ընկերությանը, որը կկամենար իր արտադրանքի թիրախային խումբ ունենալ: Բայց հայտնի է, որ ռոբոտներն իրենց արտաքին տեսքով տարբերվում են համակարգչից: Նիդերլանդների Նեյմեհենի համալսարանի իրավունքի եւ համացանցում գաղտնիության փորձագետ Միրեյ Հիլդեբրանդը հայտարարել է. «Եթե ռոբոտները մարդանման լինեն, մարդիկ միգուցե սկսեն ռիսկի դիմելով վստահել նրանց»: Մարդիկ հակված են ռոբոտը համարել ավելի մեծ իրողություն, քան պարզապես նոր տեխնոլոգիա, նոր սարք՝ անգամ եթե ռոբոտը մարդանման չէ: Օրինակ, հաճախ մեջբերվող ԱՄՆ Ջորջիա նահանգի Տեխնոլոգիական համալսարանի հետազոտության համաձայն, սկավառականման ռոբոտ-հավաքարարի 30 սեփականատիրոջ հարցումը ցույց է տվել, որ սեփականատերերի մեծ մասը ռոբոտին կնոջ կամ տղամարդու անուն է տվել, ոմանք նրան համարել են ընտանիքի անդամ՝ ընտանի կենդանու նման մի բան:

Հենց այս պատճառով Ռայթն ու նրա գործընկերներն ուզում են տեսնել, թե ինչպես կարծագանքի մարդը, եթե ռոբոտը ներխուժի մարդու անձնական կյանք: Նաոն սովորաբար չի անցնում անձնական սահմանները, սակայն կարող է ծրագրավորվել ու դառնալ ռոբոտ-խուզարկու: Այդ փորձի ժամանակ Նաոն չի անի այնպիսի մի բան, որ չեն անում ժամանակակից համակարգիչներն ու սմարթֆոնները: Բայց նշված սարքերը մարդանման չեն: «Ի՞նչ կանի մարդը, եթե գործողությունը կատարի մարդանման սարքը: Մարդը կնչարդայնանա՞, թե՞ կսկսի հաճույքով տեղեկություններ փոխանակել»,- հարցնում է Ռայթը: Առայժմ հայտնի չէ, թե ինչպիսի արդյունքներ կստացվեն, բայց Ռայթը համոզված է, որ ամեն դեպքում հարկ է միջոցներ ձեռք առնել մեր անձնական կյանքը ռոբոտների ներխուժումից պաշտպանելու համար: Ամեն դեպքում, նա կարծում է, որ խնդրի լուծումը մարդ-ռոբոտ բոլոր տեսակի տեղեկությունների փոխանակման բացառումը չէ: Որոշակի՝ մարդու շահերից բխող փոխզիջում է պետք: Օրինակ ռոբոտ-դայակն անհրաժեշտ տեղեկությանը տիրապետելու պարագայում կարող է կանխել իր խնամքին վստահված անձի առողջության վատթարացման հետ կապված հնարավոր խնդիրները: Ռայթի խոսքով, հարկ է տեղեկատվական անվտանգության համակարգ նախատեսել դեռ ռոբոտի նախագծման փուլում, ոչ թե հետո փորձել բացը լրացնել «կարկատաններով»: Հարկ է ունենալ այնպիսի մի համակարգ, որը կապահովի դրված խնդիրը կատարելու համար անհրաժեշտ տեղեկության հավաքում: Օրինակ, սմարթֆոնների որոշ հավելվածներ հավաքում են նաեւ այնպիսի տեղեկություն, որը պետք է ոչ թե ձեզ, այլ՝ արտադրող ընկերությանը:

Ռայթն ընդգծում է, որ ռոբոտն անվտանգ կդառնա, եթե ունենանք համապատասխան իրավապաշտպան դաշտ: Սրա հետ համաձայն է Հիլդեբրանդը. «Ես կարծում եմ, որ այս հարցում շատ կարեւոր է իրավական հենքը: Եթե մենք դա չապահովենք՝ չունենանք տվյալների պաշտպանության իրական համակարգ՝ լուրջ խնդիրներ կունենանք»:

1995 թվականին Եվրամիությունը կարգադրություն է տարածել ուղղված անձնական տվյալների մշակման ժամանակ մարդու անձնական կյանքի եւ իրավունքների պաշտպանությանը: 2012 թվականին Եվրահանձնաժողովն առաջարկել է վերանայել համացանցում գաղտնիության պայմանները:

Համացանցային մեր դարաշրջանում յուրաքանչյուր մարդու մասին կարելի է իմանալ ավելին՝ քան երբեւէ: Ռոբոտներն էլ ավելի են լրջացնում հարցը: Եթե պարզվի, որ ռոբոտների հանդեպ մարդու վստահելիության աստիճանը կախված է ռոբոտի արտաքին տեսքից՝ մարդանման է, թե ոչ, հարկ կլինի պարզել՝ որքան խորն ենք վստահում նրան: Ի վերջո, ռոբոտի աչքերով, մեզ այլք կարող են նայել-հետեւել:

ԱՄՆ-ն ու Ռուսաստանը կրճատում են միջուկային սպառազինություններն ու կարողությունները: Սակայն դա տեղի է ունենում նախկինից ավելի դանդաղ:

Աշխարհում միջուկային զենքի ծավալը՝ ԱՄՆ, Ռուսաստան, Պակիստան

Աշխարհի խնդիրներն ուսումնասիրող Սկոտհոլմի միջազգային ինստիտուտի՝ SIPRI-ի (Stockholm International Peace Research Institute) տվյալները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի ապառազմականացման տեմպերը դանդաղ են 10 տարի առաջվա համեմատ: Ապառազմականացման տեմպերը դանդաղ են անգամ մեկ տարի առաջվա համեմատ: ԱՄՆ-ն ու Ռուսաստանը տիրապետում են աշխարհի միջուկային զենքի 90 տոկոսին եւ միջուկային սպառազինությունը կրճատելուն զուգահեռ մնացածն արդիականացնելով են զբաղված: «Ակնհայտ է, որ դա ոչ մի կապ չունի զինաթափման լուրջ գործընթացի հետ», - Dpa գործակալության հետ զրույցում նկատել է SIPRI-ի փորձագետ Ֆիլիպ Շելը:

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին, միջուկային զենքի ծավալը նվազում է: Այսպես՝ ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Միացյալ թագավորությունը, Ֆրանսիան, Չինաստանը, Հնդկաստանը, Պակիստանը, Իսրայելը միասին տարվա սկզբին ունեին մոտ 16 հազար միավոր միջուկային զենք՝ մոտ 900 միավորով պակաս քան մեկ տարի առաջ՝ ասվում է SIPRI-ի զեկույցում: Աշխարհի խնդիրներն ուսումնասիրող Ստոկհոլմի միջազգային ինստիտուտում արձանագրում են, որ միջուկային զինաթափումը դանդաղ, բայց հետեւողականորեն առաջ է գնում:

350 միլիարդ դոլար՝ սպառազինության պահպանության եւ արդիականացման համար

Հարձակողական ստրատեգիական սպառազինության հետագա կրճատման 2011 թվականի համաձայնագրի համաձայն, ԱՄՆ-ն ու Ռուսաստանը պարտավոր էին իրենց միջուկային գլխիկները կրճատել 1550-ով: Երկրներն արդեն մոտենում են այդ սահմանագծին: Աշխարհի խնդիրներն ուսումնասիրող Ստոկհոլմի միջազգային ինստիտուտի տվյալներով, ԱՄՆ-ում դեռ կա մոտ 7300, իսկ Ռուսատանում՝ մոտ 8000 մարտագլխիկ: Դրա համար էլ միջուկային զինաթափման տեմպը նվազել է, կարծում է SIPRI-ի փորձագետ Ֆիլիպ Շելը:

Մյուս կողմից, ԱՄՆ-ում մտադիր են առաջիկա 10 տարում 350 միլիարդ դոլար ծախսել միջուկային սպառազինությունների պահպանության եւ արդիականացման համար: Ռուսաստանը նույնպես ներդրումներ է անում այս ոլորտում:

Աշխարհի խնդիրներն ուսումնասիրող Ստոկհոլմի միջազգային ինստիտուտի զեկույցի համաձայն, միջուկային զենք ունեցող ոչ մի երկիր չունի միջուկային զենքից ամբողջությամբ հրաժարվելու ծրագիր: Նկատվում է առկա սպառազինությունն արդիականացնելու միտում: «Միջուկային զենքը կմնա մարտավարական հաշվարկների խոր ներդրված բաղկացուցիչ»՝ գրված է Աշխարհի խնդիրներն ուսումնասիրող Ստոկհոլմի միջազգային ինստիտուտի զեկույցում:

Աշխարհի երկրներն ունեն միջուկային զենքի հետեւյալ չափաբաժինները

Ռուսաստան- 8000 միավոր, ԱՄՆ-7300 միավոր, Միացյալ թագավորություն-225 միավոր, Ֆրանսիա-300 միավոր, Չինաստան-250 միավոր, Պակիստան-100-120 միավոր, Հնդկաստան-90-110 միավոր, Իսրայել-80 միավոր, Հյուսիսային Կորեա-6-8 միավոր:

Անհապաղ օգտագործման համար պիտանի միջուկային զենք ունեն միայն Ռուսաստանը (1600), ԱՄՆ-ն (1920), Միացյալ թագավորությունը (160) եւ Ֆրանսիան (290): Աշխարհի խնդիրներն ուսումնասիրող Ստոկհոլմի միջազգային ինստիտուտի զեկույցի համաձայն, այս մարտագլխիկներն արդեն տեղադրված են հրթիռների վրա, կամ այնպիսի ռազմաբազաներում են, որտեղից կարող են ազատ արձակվել:

SIPRI-ի փորձագետ Ֆիլիպ Շելը նկատել է, որ Հյուսիսային Կորեան արտադրել է 6-8 մարտագլխիկ պատրաստելու համար անհրաժեշտ հարստացված ուրան, սակայն, չկան ապացույցներ, թե երկիրը արդեն ստեղծել է իսկական մարտագլխիկ:

Ֆուտբոլի աշխարհ

Ֆուտբոլի Աշխարհի 20-րդ առաջնության մեկնարկը տրված է: Եզրափակիչ մրցաշարում հայտնված 32 երկրների երկրպագուններն անսահման ոգեւորության մեջ են: Բայց քիչ ոգեւորություն չեն ապրում նաեւ իրական ֆուտբոլը սիրող եւ գնահատող մարդիկ: Ողջ աշխարհը հնարավորություն ունի մեկ ամիս շարունակ հետեւել այս իրադարձությանը, եւ նոր ռեկորդների, գեղեցիկ դրվագների, անմոռանալի հաղթանակների ու պարտությունների ականատես լինել: Այդպիսի դրվագներն ու փաստերը հավերժ գրանցվում են ֆուտբոլի պատմության էջերում:

- Ֆուտբոլը պաշտոնապես արգելված է վեց երկրներում, որոնց թվում են նաեւ Գրենլանդիան, Աֆղանստանը եւ Կամպուչիան:
- Բրիտանիայում մառախուղը սովորական երեւույթ է, բայց արտասովորը երկու շոտլանդական խմբերի հանդիպման ժամանակ է տեղի ունեցել: Մառախուղն այնքան է տարածվել, որ մարզիկները երկար ժամանակ ստիպված են եղել փնտրել գնդակը, խաղընկերներին եւ հակառակորդներին: Մրցավարին մի պահ թվացել է, որ խաղադաշտում սովորականից շատ խաղացողներ կան: Նա նկատել է, որ պահեստայինների նստատեղերը լրիվ դատարկ են եւ անմիջապես դադարեցրել է խաղը: Պարզվել է, որ դաշտում միաժամանակ գտնվել են 30 մարզիկ:
- Բրազիլական ֆուտբոլային խումբ «Կակովա»-ն, որը բավական լավ արդյունքներ ուներ, հանկարծակի լուծարվում է Ներքին գործերի նախարարության հրահանգով: Բանն այն էր, որ ֆուտբոլային թիմը կազմված էր ոստիկաններից, իսկ խաղերի ժամանակ մարզահամալիր էին գալիս ոստկանների մեծ խմբեր՝ երկրպագելու իրենց գործընկերներին: Այդ ընթացքում հանցագործությունների արագ աճ էր գրանցվում քաղաքում, բայց տրիբունաներում կարգ ու կանոնը հստակ պահպանվում էր:
- Բրազիլացի ֆուտբոլիստ Պինեյրոյին անվանում էին ինքնագոլերի ռեկորդակիր: Միայն մեկ սեզոնի ընթացքում նա իր իսկ դարպաս է ուղղարկել 10 գնդակ: Այդ ամենից խուսափելու համար նրան հարձակման գիծ են տեղափոխում: Սակայն առաջին հանդիպման ժամանակ նա կրկին ինքնագոլի հեղինակ է դառնում:

Պիրեյրոյի 25 ամյակին թիմակից ընկերները յուրօրինակ նվեր են պատրաստում նրա համար՝ նվիրելով կողմնացույց, որի վրա փորագրված էր՝ «Հիշի՛ր, հակառակորդն այն կողմում է»:

- Հայտնի է երկու դեպք, երբ մրցավարները կարմիր խաղաքարտ են ցույց տվել իրենք իրենց: Մեկը «Պիտերբորո Նորտ Էնդ» եւ «Ռոյալ Մեյլ» հանդիպումը սպասարկող մրցավար Էնդի Ուայնն էր, մյուսը «Սաութհեմպտոն Արմս» եւ «Հերսթբորն Տարրանտ Բրիտիշ Լեգիոն» հանդիպման մրցավար Մելվին Սիլվեսթերն էր: Առաջինը հեռացրել էր իրեն խաղից, որպեսզի խուսափի դարպասապահի հետ ընդհարումից, իսկ երկրորդը՝ խաղացողներից մեկի հետ վեճի համար:
- Մի անգամ Իտալացի դարպասապահ Գրոսսոն խաղի ժամանակ խորհուրդ է տալիս մրցավարին ակնոց կրել, ինչի համար անմիջապես հեռացվում է խաղադաշտից: Պարզաբանումների ընթացքում հայտնի է դառնում, որ Գրոսսոն օպտիկական ակնոցների խանութի սեփականատեր է, իսկ մրցավարն իսկապես վատ տեսողություն ունի: Հաշվի առնելով, որ դարպասապահի խոսքերը վիրավորական բնույթ չեն կրել, այլ օգտակար խորհուրդ են եղել, ընդհարումը հեշտ լուծում է գտնում: Դարպասապահին ներում են, իսկ մրցավարն ակնոց է գնում վերջինիս խանութից:
- 50-ականների վերջին իտալական քաղաք Սիենայում ֆուտբոլային մրցավարները որոշում են իրենք էլ խաղալ: Ստեղծվում են երկու խումբ եւ խաղացողները դուրս են գալիս մարզադաշտ: Ամեն ինչ բարեհաջող ընթացք ուներ մինչ վիճելի գոլը: Բոլոր 22 մարզիկները, քաջատեղյակ լինելով ֆուտբոլային բոլոր կարգ ու կանոններին, սկսում են ապացուցել իրենց իրավացիությունը: Այնքան բուռն բանավեճ է սկսվում, որ ոստիկանների միջամտության անհրաժեշտություն է լինում:
- Իսպանիայում բացառիկ դեպք է տեղի ունեցել երկրորդ լիգայի խմբերի՝ «Սան Իսիդրո»-«Օլիմպիկո Կարրանտե» հանդիպման ժամանակ: Պատճառը կրկին վիճելի գոլն էր: Հանդիպման ավարտից 3 րոպե առաջ բոլոր խաղացողները, դժգոհ լինելով մրցավարությունից, շրջապատում են մրցավարին, որպեսզի մի լավ դաս տան: Այդ ծայրահեղ իրավիճակում մրցավարը՝ պահպանելով կատարյալ հանգստություն, բոլոր 22 մասնակիցներին կարմիր խաղաքարտ է ցույց տալիս:
- 1978 թ.-ին Հունաստանի առաջնության ժամանակ հանդիպում էին «Էթնիկոս» եւ «ՊԱՕԿ» խմբերը: Հակառակորդի դարպաս առաջին գոլն ուղարկելուց հետո «ՊԱՕԿ»-ի խաղացողները, ուշադրություն չդարձնելով մրցավարի պահանջներին՝ վերադառնալ եւ շարունակել խաղը, սկսում են իրենց ուրախությունը կիսել պահեստային ընկերների հետ: Երկար չմտածելով՝ հակգրոհի են անցնում «Էթնիկոս»-ի խաղացողները եւ հավասարեցնում հաշիվը:
- 1891 թ.-ին ֆուտբոլի կանոնների իռլանդացի փորձագետ Ջոն Պենալտին առաջարկում է ներմուծել 11 մետրանոց հարված՝ դիտավորյալ կոպիտ խաղի կամ ձեռքով խաղի համար: Առաջարկն ընդունվում է եւ առաջին անգամ այդպիսի հարված իրացվում է հենց իռլանդական ֆուտբոլային լիգայում: Հիմա ողջ աշխարհում այդ հարվածն անվանում են պենալ (տուգանային հարված):
- 1969 թ.-ի Ֆուբոլի Աշխարհի առաջնության նախընտրական փուլի ժամանակ Հոնդուրասի հավաքականի պարտությունը Սալվադորի հավաքականին երկու երկրների միջեւ վեցօրյա պատերազմի պատճառ է դառնում:
- Հայտնի դարպասապահ Լեւ Յաշինը նաեւ հոկեյ է խաղացել: 1953 թ.-ին նա դարձել է հոկեյի ԽՍՀՄ Գավաթի հաղթող եւ ԽՍՀՄ առաջնության բրոնզե մեդալակիր: Յաշինին արդեն ցանկանում էին հրավիրել հոկեյի հավաքական Աշխարհի առաջնության համար, բայց նա որոշում է կենտրոնանալ ֆուտբոլի վրա:
- 1976 թ. մարտի 20-ին «Ասթոն Վիլլայի» խաղացող Թրիս Նիկոլը «Լեսթեր Սիթի»-ի դեմ խաղում 4 գոլի հեղինակ է դառնում. նա երկու գնդակ ուղարկում է հակառակորդի դարպաս եւ եւս երկուսն՝ իր թիմի:

Տնանվաճառային թատրոն / Հագուստ		Վայրի խոզ / Բուք		Պորտուգալիայի բռնապետ 1932-68թթ.							
					«... բարձր, ուժեղ»		Խառնածին սերունդ		Կիսաբանկ. քար / Մենք, ..., նրանք		Հայ գրող՝ Վահրամ ... / Վառվում է եկեղեցում
Թռչուն / Որսկան շուն				Ընտիր կերակուր / Հուշարձան							
					Իտալացի նկարիչ / Գրություն ծրարի մեջ						
Սիզամարգ / Գործ, աշխատանք						Անհիմն, անմիտ		Նոյի որդիներից / Գինու տեսակ			
			Սպասքի առարկա / Քաղցր բալ						Հայ գրող՝ Հմայակ ...		Ճապոնական ավտոմոբիլ
Ծիրանի տեսակ		Հայ մեծ երգահան / Պատան								Ֆիլմ՝ «... օրերի երգը»	
	Կահույքի առարկա / Տարվա եղանակ						Ծառի տեսակ / Ոլորք, փաթույթ				
				Կաշվե մտրակ		Քաղաք Հայաստանում					
	Ահ, սարսափ / Ոլորած քուղ				Գետ Հրվ. Ամերիկայում						
						«... դարդի տեր ... կխոսա»		Նոյի կրտսեր որդին		Մետաքսագործների ընտանիքի թիթեռ	
	Պատանդ		Իտալացի ճանապարհորդ՝ Մարկո ...		Օգուտ / Քաղաք Ուզբեկստանում				Հայ երգահան՝ Քրիստափոր ... Մուրզա		Լաչառ, անզգամ
Բանկին պահ տված նյութական արժեք		Պարսավել, խայտառակել									
							Չարի ընդդիմադիրը				
Խորհրդային սփրայթ		«... եզը կալումը կերեւա»				Ֆրանսիացի կինոդերասան՝ ... Դեպարդյե					
							Չի հեծնելու հարմարանք				

Նախորդ համարի խաչբառի պատասխանները

	Ճ		Պ		Ա	Ս	Պ	Ա	Ր	Ե	Ջ
Կ	Ի	Վ	Ի	Վ		ԵՎ		Գ		Մ	
	Կ	Ա	Ր		Ռ	Ա	Ֆ	Ա	Յ	Ե	Լ
Պ	Ա	Թ	Ո	Ս		Կ	Ա	Պ	Ո	Ն	Ե
	Հ	Ա	Լ	Ե	Պ		Ն		Թ	Ի	Մ
Ս	Ե	Ն		Դ	Ե	Ն	Ե	Բ		Ն	
	Ր		Մ	Ա	Կ	Ա	Ր	Ո	Ն		Փ
Ի		Մ	Ի	Ն	Ի	Ն		Ճ	ՈՒ	Կ	Ա
Դ	Ր	Ո	Ճ		Ն		Բ	Ա	Բ	Ա	Ն
Ե		Դ	Ե	Մ		Կ	Ա	Կ	Ա	Պ	Ո
Ա	Ս	ՈՒ	Լ	Ի	Ս		Տ		Ր		Ս
Լ		Լ		Ջ		Ծ	ՈՒ	Ռ		Մ	
	Մ		Ն	Ա	Խ	Ա	Տ	Ե	Ս	Ե	Լ
Հ	Ա	Մ	Ա	Դ	Ա	Մ		Բ	Ա	Ջ	Ե
	Ճ	Ի	Ն	Ե	Լ		Գ	ՈՒ	Ք	Ա	Ն
Ա	Կ	Ն	Ա	Պ	Ի	Ճ		Ս	Ո	Ն	Ա

Հեռ. 010 31 77 20, 060 44 02 30
E - mail: info@mes.am
Ստորագրված է տպագրության 19.06.2014 թ.